

ՏԱՍՏԵԻ ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлис. Редакция «Мелк».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը քննարկում է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի Թիֆլիսի և տոն օրերէն):

Յայտարարութիւնը քննարկւում է ամեն լիզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Բանւորների բնակարանները.—Ներքին Տեսութիւն. Երևանի թեմական դպրոցը և նրա ուղղութիւնը. Թիֆլիսի քաղաքից եկեղեցու երեք-փոխի բնակարանները առիթով. Մի նկատողութիւն. Նամակ խմբագրին. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Առաւօտեան վերաբերեալ օրէնքները Անգլիայում. Արտաքին լուրեր.—ԽՈՒՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՆՈՒԳՈՒՆԵՐ.—ԲՈՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ուստա Մատին.

ԲԱՆՈՐՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԸ

Բոլոր հարցերից, որոնք վերաբերում են բանւորների դրութեան բարելոման, անտարակոյս, ամենանշանաւորն է բանւորների բնակարանների հարցը: Բնակարանը, իրաւմեծ ներգործութիւն ունի բանւորի թէ՛ բարք ու վարքի, թէ՛ սովորութիւնների, թէ՛ առողջութեան վրա և թէ՛ վերջապէս նրա ամբողջ կենցաղավարութեան վրա: Այդ պատճառով ամեն տեղ, որտեղ օրէնքներով պաշտպան են հանդիսանում բանւորների կեանքի բարելոման հարցին, նրանք ամենից առաջ և ամենից աւելի ուշադրութեան են առնում բանւորների բնակարանի հարցը: Եւ այդ հարցը այս օրպէս հերթական է թէ՛ Անգլիայում, թէ՛ Ֆրանսիայում, թէ՛ Բելգիայում և թէ՛ Հոլանդիայում:

Բելգիայում պարլամենտը ընտրեց մի յանձնաժողով ընդհանրապէս բանւորների հարցը և մասնաւորապէս բանւորների բնակարանների խնդիրը խղճմտաւոր կերպով քննելու համար: Այդ յանձնաժողովի գեկուցումից երևում է, որ Բելգիայի թէ՛ գիւղաբնակ և թէ՛ քաղաքաբնակ բանւորների բնակարանները, ընդհանրապէս, վատ են, հակառողջական են և բանւորը դժուարութեամբ կարողանում է գտնել մի քիչ թէ՛

շատ օրինաւոր բնակարան այնպիսի էփան վարձով, որ իրան ծանր չը լինէր վճարել: Նոյն եզրակացութեանը հասաւ և Անգլիայում: Չորս Գիլդի նախագահութեամբ կազմված պարլամենտական յանձնաժողովը, ապացուցանելով որ Անգլիայի, յատկապէս Լոնդոնի բանւորները ընդհանրապէս կենում են այնպիսի բնակարաններում, որոնք ամեն տեսակէտից հակառողջական են, չեն համապատասխանում մարդկային կեանքի ամենատարրական պահանջներին:

Բայց, այնու ամենայնիւ, Անգլիայում անդադար հոգալով բանւորների դրութեան մասին, արդէն հասան նշանաւոր հետեւանքների այդ դասակարգի դրութեան և յատկապէս նրա բնակարանների բարելոման վերաբերմամբ: Այժմ Անգլիայում մի քանի հազար հատ բնակարաններ կան, որոնցից մի քանստուն հատ նոյն իսկ Լոնդոն քաղաքում, որոնց նպատակն է կառուցանել բանւորական բնակարաններ համեմատ առողջապահական պահանջներին: Արդէն 1885 թւին Լոնդոնում աւելի քան 20 հազար բանւորական բնտանիքներ կենում էին այդ նոր և յարմար բնակարաններում և այժմ ամեն օր բազմաթիւ նոր բնակարաններ են կառուցվում: Երկու տարի մի քանիսները յարմարեցրած են բանւորական մի մի բնտանիքի համար, միւսները հինգ, վեց յարկանի տներ են, որոնք բաժանված են բազմաթիւ բանւորական բնակարանների վրա: Այժմ սկսում են և Անգլիայում, ինչպէս և Հոլանդիայում, Բելգիայում և Շվեյցարիայում, հասկանալ թէ՛ մատակարարելով բանւորներին էփանաւոր բնակարաններ, այդ նպատակով կազմվող բնակարանները ոչ թէ միայն բարի և մարդասիրական գործ են անում, բայց և շահ ունեն այդ տեսակ բանւորական տներ ու բնակարաններ կառուցանելու: Եւ ահա ինչպէս:

Եւրոպացի բանւորը առհասարակ, վճարում է իր վատ, անառողջ և անյարմար բնակարանի համար համեմատելով շատ թանկ: Եթէ գնահատենք այն տունը, որի մէջ կենում է բանւորը, կը յայտնվի, որ ողորմելի տան կառուցման, պահպանելու և տուրքը վճարելու ծախսերը չարժեն այն վարձը, որ տանտէրը վերցնում է բանւորից իր ողորմելի բնակարանի համար: Կը յայտնվի որ տան տէրը իր ողորմելի և քայքայված շինութեան համար բանւորական բնակարանից ստանում է 8 պրոցէնտ: Եւ ահա կապիտալիստների այն բնկերութիւնները, որոնք իրանց նպատակ են դրել բանւորական բնակարաններ կառուցանելու, հասկացան, որ կարելի է թէ՛ և էփանաւոր, բայց յարմար, առողջական պայմաններին համապատասխանող տներ շինել,— և դարձեալ շահ ունենալու բաւականաւորով բանւոր կենցաղներից այնպիսի վարձ պահանջելու, որը իրանց գործը դրված կապիտալին կը բերէ 3%-ից մինչև 4%: Իսկ անշարժ կայքից ոչ թէ միայն 4, բայց և 3 պրոցէնտ ստանալը Եւրոպայում մեծ շահ է նշանակում: Մի և նոյն ժամանակ բանւորն էլ վճարելով այժմ իր բնակարանին աւելի էփան, վճարելով տանտիրոջ ոչ թէ առաջվայ պէս 8% նրա անշարժ կայքի շահ, այլ միայն 4%, իր առաջվայ վարձի կէսը խնայում է և այդ խնայած փողը կարող է յանձնել խնայողական արկղ:

Այդ բաւական չէ: Այն խնայած փողը, որ բանւորը առաջ գործ էր դնում իր բնակարանի վրա, նա կարող է գործ դնել իր բնակած փողերի տունը բնկերութիւնից հետո: Բանւորական բնակարաններ և տներ չէնող բնկերութիւնը բանւորից փոխանակ առաջվայ նրա վճարած 8% պահանջելու, բաւականանում է այժմ նրանից այնպիսի բնակարանական վարձ ընդունելու,

որ դարձեալ տալիս է բնկերութեան ձեռքով կառուցված անշարժ կայքերին 3% շահ: Ուրեմն եթէ նոյն բնկերութիւնը առաջարկի բանւորին փողը ինչ աւելացնել բնակարանական վարձը, օրինակ այնքան վճարել, որ այն անշարժ կայքը, որի մէջ բնակվում է բանւորը, բերէր բնկերութեանը տարեկան 5% այդ աւելորդ 2% կը համարվի որպէս կապիտալի հետադհետէ հանգչում և մի շարք տարիներից յետոյ բանւորը սեփականատէր կը դառնայ իր կեցած բնակարանին:

Եւ այդ տեսակ կոմբինացիաներ, որոնք շատ ձեռնտու են բանւորների համար, վաղուց է արդէն որ գոյութիւն ունեն Շվեյցարիայում, Ֆրանսիայի և Անգլիայի մի քանի տեղերում, մասնաւոր մեծ արդիւնադորձական կենտրոններում:

Յաւալի է միայն, որ դարձեալ այդ տեսակ երևոյթներ առանձնացած երևոյթներ են Եւրոպայում և կապիտալիստների բնկերակցութիւնները դեռ ևս ամեն տեղ չեն հասկացել, որ այդ սխառմայով բանւորական յարմար և առողջ բնակարաններ և փողերի տներ կառուցանելով, նրանք ոչ թէ միայն բարեգործութիւն արած կը լինեն բանւորներին, այլ և իրանք դրական շահ կունենան իրանց ձեռնարկութիւնից:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐՈՅԸ ՈՒ ՆՐԱ ՈՒՂՂՈՒԹԻՒՆԸ

Մի քանի օրէց յետոյ ուսն Երևանի թեմական դպրոցում սկսվելու են ջատկիպ տոները արձակուրդները, այնուհետև քննութիւններն են սկսվելու, որից յետոյ այդ դպրոցը իր գոյութեան 53 տարեկան ընթացքում, այս տարի միայն կարողա-

դուք չէք հասկանայ. շատ անգամ կուի ու խաղաղութիւնը մի չնչին խօսքից է կախված լինում, կամ մի գողացած ձի է լինում և այլն: Բայց ուղիղն ասած այդ խնդիր ու փրանցուզն էլ այնքան ուստա մարդիկ չեն, օրինակ եթէ նրանց չենած գործիքները տեսնէք, հաւատացէք, որ կը ծիծաղէք փորները բռնած:

—Հէնց վերցրէք օրինակ դրանց չինած դանակը և մեր չինածը. սարեր ու ձորեր կան երկուսի մէջ: Մինչև անգամ մածոնը կտրելիս էլ մարդ սկսկում է, որ չը լինի թէ կտրվին, իսկ նրանց չինած գութանը:

Ով որ քաղաքից (Թիֆլիսիս այդպէս է կոչվում Ե, գիւղում) գալիս լեմանների գիւղի մօտով անցած է, նա տեսած կը լինի այնտեղ վար անելիս կը տեսնեն մի գութանը քաշում են երկու ձին. զուխը մեռնի ուստա Մարտիրոս, որ այդպիսի մի ծռղիւկ-պոտի բան չինես:

Իմ չինած գութանի խուփը մի մարդը տեղիցը հաղիւ է շարժած: Ին գութանն ինչ գութան է, որ 12 լուծ եղն ու գոմէջ չը լինեն լծված:

Չէ ամեն բանի համը գնացած է, ինչ որ դըրանք մեր երկիրը ոտը դրին...

Գորպատ.

Մ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՈՒՍՏԱ ՄԱՏԻՆ

VII

—Ասում են (միշտ այդպէս էր սկսում ուստա Մատինի պատմութիւնը), որ ինչիցի ու փրանցուղի մէջ կուի է ծագել:

—Պահ, պահ, պահ, համա կուի կը լինի յէն. աշխարհիս երկու ամենաքաջ ազգերն են նրանք, սկսեցին ամեն կողմից գիւղացիների նկատողութիւնները: Բայց արդեօք ինչ կը լինի եղած դրա պատճառը:

—Հազար ու մի տեսակ բաներ են ասում, շարունակեց լրջութեամբ ուստա Մատին, բայց իմ կարծիքով պատճառն այս է եղած: Փրանցուտանում մի սիրուն աղջիկ է լինում, որի գովքը աշխարհ-աշխարհ է ընկնում: Ինչիցիցի թազաւորը նրան տեսնում է ծովի ափին և ուզում է իրա տղի համար ուզէ, բայց փրանցուղները չեն տալիս. ուստի և ինչիցի թազաւորը բարկացած ուղարկում է տան լաւ զինաւորված մարդիկ, նրանք գործի նման թէ ջրուն են ապրում, թէ ցամաքում, այդ մարդիկը ծովի տակով դալիս են ափը և աղջկանը լողանալիս փախցնում:

—Հիմա փրանցուղները, ուստին ու օսմանլուն վեր են կացած ինչիցի վրա, որովհետև նրանք էլ ուզում էին իրանց տղերանց համար ուղիղ այդ աղջկան: Որ տեսնում են աղջկանը չեն կարողանում յետ բերել, ասում են ով շատ փող

տալ կարող է, նա կը տանի աղջիկը. էնտեղից վեր է կենում Ղլլաւի շահը և իրան տղեն ուղարկում, եօթն ուղտ բռնած ոսկի ու անպին բարեր և նա տանում է աղջկան:

—Տօ ինչ ես պատմում, ուստա Մատին, արքա ասում են ինչիցի աւելի շատ փող ունի, անց է, որ Ղլլաւը տանում է, նկատեց մի ծերունի:

—Ե՛հ, ինչ քո խելքի բանն է այդ մասին խօսել, նկատեց ուստա Մատին հպարտութեամբ. ինչիցի միայն իրան հողի թազաւորն է, բայց Ղլլաւը ինչում է Երանին, Թուրանին, Շիրազին, Հընդստանին:

Որովհետև ծերունին աշխարհագրութիւնից այդքան հեռու չէր գնացած, իսկոյն լռեց, որ և պատճառ դարձաւ ընդամենը ծիծաղի և ծաղրի:

—Ինչ ես պատմում, նկատեց մի ուրիշը, ես եղել եմ Գիւրում, Ղարում, Տրապիզոնում, Սամսոնում, թէ որ երկու էլ գնացել էի, Ստամբուլ կը հասնէի, ես այդ մասին ոչինչ չեմ լսած. դա երիտասարդ ժամանակ տաւարավաճառ էր եղած և Եօրագեալում մի քանի գիւղեր տեսած, ուստի և տեղի ու անտեղի յիշում էր իր տեսած գիւղերը մի մի քաղաք հուշակերտով:

—Գու որ ճանապարհորդում էիր, նկատում է ուստա Մատին, այդ ժամանակ ոչինչ չը կար, կուիս այժմ է ծագել: Բայց ես կարծում եմ, որ օսմանլուն այդ ղլլաւին չի հաւաքանի, նա կը լուի կը սկսի:

—Չէ կարող, նկատեց տանուտէրը, օսմանլուն ուստից յաղթվեց, նա ինչպէս ղլլաւին հետ կը կուի:

—Բայց հիմա օսմանլուն աւելի քաջ է, քան թէ առաջ և նրա հրացանն աւելի հեռու է գըցում:

—Բաս ղլլաւը քնած է, նա չէ կարող նոր հրացան չինել տալ:

—Ո՛չ, որովհետև նա լաւ դարբին չունի, ինչպէս օսմանլուն:

—Երկուսը էլ ցնդում էք, նկատեց տանուտէրը, Գամակոսը հիմա ինչիցի թագաւորութեան մէջ է:

—Ո՛չ, ո՛չ, ընդդիմեցին երկու ծերեր:

—Շան լակոտներ, ինչ էք ղլլի վրա մէջ ընկնում, ուր ոչինչ չէք հասկանում, բղաւեց տանուտէրը կոպտութեամբ:

—Ո՛չ մեր հասակին հասնես, ինչիւ ես հայտնում, պատասխանեցին զրգուած ծերերը. ինչպէս ես դու շան լակոտ ասում քեզինք տարիքով մեծին:

—Լռեցէք ասում եմ, եթէ ոչ այս օրպէս երկուսից էլ տուն կը կը գցեմ և այնքան կը պահեմ քաղցած, որ Գամակոսի ճանապարհը դատնէք, ընդհատեց տանուտէրը տեղից վերկենալով: Երկու ծերերը ստիպված լռեցին:

VIII

Մինչ տանուտէրը Գամակոսը ինչիցին էր տալիս սպաւնալիքով, ուստա Մատին մտածում էր մի նոր կուի մասին:

—Այդ մի կողմը կենայ, տղերք, սկսեց նա, բայց այժմ ուղիղ կուի է սկսած լէմնի ու փրանցուղի մէջ և դրա պատճառը, իմ կարծիքով, այս է: Երբ որ ինչիցին ու փրանցուղը կուի ունենին, նրանց զինուորները պէտք է լէմանների երկրի միջով անցնէին, ուստի և շատ վնասներ են տուել և հետագային փողը չեն տուել փրանցուղները և հիմա արիւնը գետի պէս գնում է այդ երկու երկրի մէջ:

—Այո, այո այդ բոլորովն ուղիղ է, նկատեցին համարեա բոլորեքսն, այդ պատճառով և արեգակի երեքը կարմիր արիւնով ծածկված էր ամբողջ մի օր:

—Տօ իմ ասածներից որն է սխալ, մի բան դեռ չեմ պատմած, որ չը կատարված լինի, ամեն բան ուղիղ զուլն է եկած:

—Բայց այնքան դժուար է նրանց բաները հասկանալ, որ չարժէ երկար խօսել, առանց այն էլ

նախով բացել վերջնական—վեցերորդ դասատուն, առաջին անգամ պետք է տա ամբողջ թեմական դպրոցի դասընթացը աւարտող աշակերտները ճաշով աւարտող աշակերտներ, այդ դպրոցի ուսուցչական խումբը կազմում է դպրոցի պատմութիւնը, որը և գոյութեան յիմնամասերն են միասին կարգադրելու և տնօրէնելու է ակտի օրը։ Այս մի շատ ուրախակի երեւոյթ է, որ բացի Ներսիսեան դպրոցից այժմ ունենք Ներսիսեան էլ մի միջնակարգ դպրոց իր ամբողջ վեցդասարանեան դասընթացով։ Այդ բանը աւելի պատիւ է բերում Ներսիսեան դպրոցին, որովհետեւ նա, չունենալով ոչ մի նիւթական միջոց, կարողացաւ հասնել այդ քանին, այն ինչ ուրիշ դպրոցները նիւթապէս ապահովված լինելով և ծախսելով անպակաս գումարներ (ինչպէս օրինակ Շուշու թեմական դպրոցը ծախսում է 10,000-ից աւելի գումար և հազիւ կարողանում է մի չորս դասարան պահել) անմխիթար դրութեան մէջ են։

Այս վերջին երկու տարիները, կարծես, ժողովրդական էին մեր թեմական դպրոցին։ Այդ դպրոցը, որ առաջ զոգրոգում էր իր մի երկու հարիւր թուրքու վրա, որը ուսուցիչների առնչկները ամենեւին ուղարկում էր, այսօր 10,000-ի մօտ դրամադուրու աւելի և այդ շնորհով անցնալ տարւիկայ դիմադրութեան համար վերցրած վկայագրերին։ Այս տարի ևս այդ աղբիւրից, եթէ ոչ այնքան, գոնէ զօրա կէսը 5,000 ռ. ապավում է։ Պատկերից ևս յատկացրած 50-ական կողմնակները, որոնք մինչև այժմ դադարել էին մտնել թեմական դպրոցի կառույց, այսօր կանոնաւոր կերպով ստացվում են, որից կարող է 1,000—1,500 ռ. գոյանալ և վերջապէս այն 3,000 թուրքի դպրոցապետական փողերը, որոնք տրված էին մի ինչ որ թուրք բէկին՝ զեւղի և հողերի դրամականով, և որոնք հողերի քնի ընկած լինելու պատճառով կորելուս վտանգի մէջ էին, այսօր Մոսկովայի Ալեքսանդր ֆիւրմայի ներկայացուցիչները մտադիր են դնել այդ հողերը, որից սպասվում է մօտ 4,000 թուրքի ստանալ ուսումնարանի օգտին։ Այսպիսով յոյս կայ որ մի քանի տարուց յետոյ Ներսիսեան թեմական դպրոցը մի քանի տասնեակ հազարներ դրամադուրու կունենայ, որով և ընդ միշտ ապահովված կը լինի։ Նիւթական այսպիսի աշոյղ համադրանքների վրա աւելցնելով և այն, որ այժմ տեսնուլ է այդ դպրոցին պ. Արեւստղով Յովհաննիսեան, որ իր մանկավարժական և ուսումնական դիւցիպլինայի կողմից օրինակելի է և այս վերջին երկու տարում միանգամայն կերպարանափոխել է այդ դպրոցը, կարող ենք վստահօրէն թէ լաւ ապագայ *) դուռակներ այդ դպրոցին և թէ ուրախանալ այդպիսի աշոյղ համադրանքներին։

Այս բոլորից յետոյ հարց է յարուցվում՝ արդեօք ինչպէս տանել այդ դպրոցը և ինչ կարող է տալ նա, եթէ նայենք այդ դպրոցին՝ սաների վրա ունեցած նրա ընդհանուր դարձացման կողմից։ Մինչև այժմ գոնէ այդ դպրոցը ոչ մի շօշափելի և աչքի ընկնող օգուտ չէ տուել։ Չորս կողմը նայելիս միշտ հանդիպում են տեղիս միւս դպրոցների սաներին, որոնք թէ քաղաքավարութեան, թէ ընդհանուր դարձացման և թէ ընկերական և հասարակական յարաբերութիւնների մէջ միշտ աչքի են ընկնում, այն ինչ այդ բոլոր կողմերը բացակայ են մեր թեմական դպրոցի սաների մէջ։ Այդ դպրոցի գոյութիւնը անշուշտ չէ զգացվում։ Նրա սաները ոչ մի տեղ չեն երևում, եթէ երևում էլ են, բոլորովին լուռ, անխօս, և եթէ խօսում են, նկատելի է լինում ընդհանուր դարձացման և լռիկայի բացակայութիւնը (մենք չենք խօսում նրանց սովորած առարկայի մասին, որոնց կողմից նրանք բարձր են մի քանի ուրիշ ուսումնարանների աշակերտներին)։

Այս կողմը, ի հարկէ, անմխիթարական է, որովհետեւ ինչպէս այդ ուսումնարանը աշխատում է իր սաներին սովորեցնել առարկաներ՝ լեզուներ և գիտութիւն, այնքան էլ նա պէտք է տալ նրանց այնքան ընդհանուր դարձացում, այնպիսի հայեացքներ, որ սովորած առարկաները և կենսի մէջ պիտանի դառնալին։ Բաւական չէ մի աշակերտին իմանալ աշխարհա-

գրութիւն, ֆիզիկա, տօմարագիտութիւն և այլն, այլ նրան հարկաւոր է և ընդհանուր դարձացում, որպէս զի կենսի մէջ նա կարող լինի մի շօշափելի և օգտակար դիրք բռնել և յայտնի ուղղութեան հետեւ, որից, պէտք է խոստովանված, դուրի են թէ մեր բոլոր դպրոցները և թէ Ներսեանի թեմական դպրոցը սաները։

Ապագայի մասին, ի հարկէ, այդ կողմից ոչինչ որոշ չէ կարելի ասել, բայց այսքան հաստատ կարելի է ասել, որ քանի դեռ մեր դպրոցներում ընդհանրապէս և Ներսիսեանի թեմական դպրոցում մասնաւորապէս կը տիրէ այն փակ ուղղութիւնը, քանի դեռ այդ դպրոցների ներքին աշխարհի և ընդհանուր դարձացում ներքնոյ առաջին աշխարհի մէջ կը մնայ մի տեսակ չինական պատ, երբեք մեր դպրոցները առաջ չեն գնալ, և երբեք նրանց սաները կենսի մէջ ոչ մի դիրք, ուղղութիւն չեն կարողանալ բռնել և անօգտակար կը լինեն թէ հասարակութեանը և թէ իրանց անձին, մոռանալով հանդերձ իրանց բոլոր սովորածները, ինչպէս մի քանի օրինակներ ցոյց են տալիս։

Ինչպէս ցանկալի և ուրախակի է մեր դպրոցների այդպիսի առաջադիմութիւնը, այնքան էլ ցանկալի է քանի կարելի է շուտ մտածել այդ վերին աստիճանի կարևոր կողմի՝ մեր ուսումնարանների սաների ընդհանուր դարձացման վերա, որի վրա հրաւիրում ենք մեր Ներսիսեան դպրոցի ղեկավարող վարչութեան ուշադրութիւնը։

Ս. Տ. Մ.

ԹԻՖԼԻՍԻ ԲԱՄՈՑԵՆՑ ԵՆԿԵՆՑՈՒՆ ԵՐԵՅՓՈՒՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ.

«Արձագանք» շաբաթաթերթը իր անցնալ, 14-որդ համարում տպել է մի յօդուած ի պաշտպանութիւն թիֆլիսի Քառասկից եկեղեցու երեսփոխ Գեորգ Աբիմանյանի։

Յօդուածի մէջ յայտնված երկար ու բարակ դատողութիւնների մասին մենք աւելորդ ենք համարում խօսել, միայն ընթերցողի ուշադրութիւնը կը դարձնենք յօդուածի այն կէտի վրա, որով յօդուածագիրը ուղարկ է ապացուցանել թէ ապրիլի 10-ի ընտրութիւնները առհասարակ և մասնաւորապէս պ. Մէլքի-Արագեօգեանի ընտրութիւնը անվավեր էր։

«Արձագանքի» յօդուածագիրը հիմնում է հետեւեալի վրա։ «Նորին սրբազնութիւն վարսաւանի և Իմէրեթի թեմական առաջնորդ Արխիմանդիտ եպիսկոպոսը 1884 թ.ին մի հրահանգ է հրատարակել վրաստանի և Իմէրեթի հայ եկեղեցիների երեսփոխանների համար, որով ղեկավարվում են (?) բոլոր երեսփոխանական ընտրութեանց միջոցին։ Այդ հրահանգի Գ. յօդուածը բերում ենք այստեղ ամբողջական չէլայց եկեղեցիների երեսփոխանները ընտրվում են իւրաքանչիւր եկեղեցու ծխականներից երեք տարի ժամանակով։ Մասնաւորութիւն. յօդուածը բացի ծխականներից եկեղեցիների մէջ յաճախում են և ժամաւորներ, ուստի նոքա ևս մասնակցում են երեսփոխանի և հաւատանների ընտրութեանը»։

Միայն պ. Արագի Յովհաննիսեան հետեցնում է, որ ուրեմն ապրիլի 10-ի ընտրութիւնները Քառասկից եկեղեցու անկանոն և անվաւեր էին, որովհետեւ ժամաւորները չեն հրաւիրվել մասնակցելու ընտրութեանը։

Բայց «Արձագանքի» խմբագիրը կատարելապէս սխալվում է, ամենեւին տեղեկութիւն չունենալով, որ վերը յիշված «Հրահանգի» Գ. յօդուածի ծանօթութիւնը ոչնչացրած է նոյն 1884 թ.ին, առաջնորդի հրատարակած «Շրջաբերականով առ առաջնորդական փոխանորդ և վերատեսուչս բարեկարգութեան եկեղեցեաց հայոց Տիֆլիսի և թեմի նորին»։ Ահա այդ «Շրջաբերականի» Զ. յօդուածը. «Ի նշանակեալն աւուր և ժամու. ծխականք իւրաքանչիւր եկեղեցուց ժողովին յեկեղեցւոյ իւրեանց ի կատարել զընտրութիւն ժողովրդական երեսփոխանաց։ Մասնաւորութիւն և ժամաւորաց միանգամայն արգելեալ լինի»։

Եւ ահա նոյն «Շրջաբերականի» Ժ. յօդուածը։ «Ընտրութիւն երեսփոխանաց եկեղեցեաց կատարի համաձայն «Հրահանգին» կազմելոյ ի Յանձնաժողովոյ Առաջնորդական յանձնարարութեանց, բացառելով ևս ևս մասնակցութեան ժամաւորաց, որ յիշատակեալն է ի ծանօթութեան Գ. յօդուածոյ, և որ խափանի այսուհետեւ ըստ զօրութեան հրահանգին այսորիկ»։

ՄԻ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆ

Երկաթուղու թիֆլիսի կայարանում մի քանի բաղադրանքներ բան ու գործ են չինել միամիտ մարդիկներին խաբելը. իմ խօսքս այն մանր կօմիւսիօնէրների մասին է, որոնք լոյսը բացվելուն պէս քաղցած զայլերի նման կայարանում պտտելով որսի են սպասում. չը նայելով որ երկաթուղու վարչութիւնը դրանցից մի քանիսին խաբարութեան համար մի քանի անգամ վռնդել է տուել կայարանից, բայց և այնպէս նրանք ուրիշ աւելի յարմար պարագայներ երևի չը գտնելով, աներկալութիւն բռնեն իրանց այդ խաբարայութիւնը անպատկառ յամաւորութեանը դարձեալ շարունակելու։ Միամիտ մարդկանց խաբելուց աւելի ինչ կայ հեղու ճշմունտ էք մի որ և է թուրք կամ զիւղացի գալիս է ապրանք ստանալու և երբ նրա ներկայացրած կրիտանցիայով պահանջում են փոխադրված ֆրախտը վճարել, խեղճը մնում է շուտաւարձ. և նրա գանգատը թէ փողը վճարել է լիովին սկզբից կօմիսիօնէրին, մնում է առանց հետեւանքի իս ինքս շատ անգամ ներկայ եմ եղել այդպիսի դէպքերի։ Եւ ինչ կայ դարմաշաւու, երբ քանի քանիսից է հասել, որ երկաթուղու մօտիկ միկիտանի խաւաթ ունեցող մի կինստօ գործ չեղած ժամանակ կօմիսիօնէրութիւն է անում կայարանում։

Անցեալ օրերում մի թուրքին կօնզուկտօրները բաւական ծեծել էին և ներկայացրել էին տուգանքի, ուրեմն պատմենք թէ գործը ինչուս է եղել։ Թիֆլիսում այդ խեղճ մարդը ունենում է մի ձի, որը ցանկանում է կայարաններից մէկը ուղարկել. զիմում է կօմիսիօնէրներից մէկին, այդ վերջինը առնում է նրանից իր կօմիսիան, ձիու ջրէնը մինչև որոշեալ տեղը և չորս թուրքի էլ մի տոմսակի համար, իսկ օրովհետեւ տէրն էլ պէտք է իր ձիու հետ դնար (համաձայն երկաթուղու կանոնների), թուրքին նստեցնում է ձիու մօտ վագօնում. վեր է առնում մի կտոր թուղթ և կպցնելով ձիու պոչին՝ բռնում էր թիւթի մասում է նրան շանապարհին պահանջում են տոմսակը թուրքից, նա ցոյց է տալիս ձիու աղիին կապած թղթի վրա. կօնզուկտօրները կարծում են որ այդ մարդը ծիծաղում է իրանց վրա և լաւ ծեծում են նրան... Եւ այդ թուրքը մննակ չէ, այլ շատ շատերն են խաբվել այդ տեսակ սքերիկայ իրանց կօմիսիօնէր անուանողների ձեռքից և դեռ շատերը կը խաբվեն, եթէ հարկաւոր միջոցներ չեն ձեռք առնվի կայարանը այդպիսիներից մարերու համար։

Ա. Ա.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳԻՆ

Թիֆլիս, 16 ապրիլի։

Յօդուած Զէյթունի հրկիզելոց հանգանակող թիֆլիսի յանձնաժողովը պատիւ ունի խնդրելու ձեր բարեհաճութիւնը յետագայ ծանուցումը ղեկավարելու «Մշակի» մօտակայ համարում ի դիտումն են վաճառօրը՝ Աշամ վարդապետ Տէր-Նիկողոսեանին։

Յանձնաժողովը թիֆլիսի մէջ յօդուած դէպքիցների փողովարարութիւնը վերջացած զտեսնելով՝ իր նախընթաց նիստում հարկաւոր համարեց համաձայն իր նախընթաց ծանուցման դադարեցնել իր դործունէութիւնը, խնդրելով օտարալիճակ աղգայիներից այլ ևս չուղարկել իր անունով գումարներ։

Մինչև այժմ յանձնաժողովիս ստացած նուէրների գումարն է 18,620 թուրքի 27 կ. որից Առաքիտանի թիւից երեք հազար չորս հարիւր ութսուն երկու թուրքի, Ներսիսի կօմիսիտօրիայից ութ հարիւր երեք թուրքի 55 կօպ, որոնց ամենի մասնաւորաց ցուցակը յանձնաժողովիս առանձին տետրակով հրատարակելու մտադրութիւն ունենալով, առ այժմ պարտք է համարում հրապարակաւ յայտնել խորին շնորհակալութիւն և նուիրատուններին և ձեզ, մեծապատիւ պ. խմբագիր, որ պատրաստակալութեամբ յանձն առնելով բանալ հանգանակութիւն խմբագրութեանը մէջ, համաձայն թեմիս սրբազան առաջնորդի խնդրանաց, արդիւնաւորեցիք հանգանակութիւնը մի նշանաւոր գումարով։

Անգամ յանձնաժողովի Բ. Մէլք-Արագեօգեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒԻՐՈ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒԻՐՈ մեզ գրում են։ «Այստեղից քաղաքս ինչ բռնի ազատ մնացած պաշտօնի համար ա-

ռաջարկված կանդիդատներից մէկն էլ բժիշկ Ա. Սիմէոնեանցն է, որի հաստատվելու համար շատերը աշխատում են և որի նշանակվելը մեր կարծիքով մեծ գրաւական կը լինէր քաղաքի առողջական դրութեան պահպանելու վերաբերմամբ։ Ժողովուրդն էլ առհասարակ համակրում է բժիշկ Սիմէոնեանցին»։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒԻՐՈ մեզ գրում են։ «Մեծ պատիւ ընթացքում այստեղի բոլոր եկեղեցիներում քաղաքից էին խօսվում, բայց պէտք է ասած որ շատ բիշ ժողովուրդ էր յաճախում այդ քաղաքները։ Պէտք է այն էլ խոստովանվել որ քաղաք ասող քահանաներից ոմանք ամենեւին պատրաստութիւն չունեն իրանց ուսման կողմից այնպիսի քաղաքներ տեսլ, որոնցից ժողովուրդը ճշմարիտ մի բան կարողանայ սովորել»։

«Արագի» հրատարակիչ, պ. Սիմէոն Գուլամի-րեանց ուղարկել է մեզ Պետերբուրգից հետեւեալ նամակը։ «Զեր լրագրի № 38-ի մէջ կասկած էր յայտնված «Արագի» երկրորդ զրբի հրատարակութեան մասին իս արդէն յայտարարած եմ նոյն իսկ «Մշակում» որ «Արագի» երկրորդ զրբի հրատարակութիւնը ուշանում է միայն այն պատճառով, որ տեղիս տպարանի հայերէն տառերը բռնված էին և մասամբ դեռ բռնված են։ Ուստի ի միանալութիւն ընթերցող հասարակութեան և մասնաւորապէս «Արագի» բաժանորդների խնդրում եմ տպագրել որ ոչ միայն «Արագի» երկրորդ զրբը կը հրատարակվի մայիս ամսի վերջում, այլ նաև հանդէս շարունակելու է իր գոյութիւնը և առաջիկայ տարիներում»։

Առողջապահական և բժշկական գիտելիքների բացակայութիւնը մի կողմից, և ժողովրդի մէջ արմատացած նախապաշարմունքները և անպէտք հեքիմութիւնը միւս կողմից՝ շարունակում են դահեր տանել։ Ահա դրա մի ապացոյցը ևս, որի մասին մեզ գրում են ԲԱԳՈՒԻՑ. «Այս օրերս այստեղ վախճանվեց մի հարուստ մարդու աղջիկը, որի թեղ կծել էր իրանց շուշու։ Ծնողները վէրքը լաւացնելու համար շան բրդից կտրում են և դնում նրա վրա։ Մի քանի օրից յետոյ վէրքը չորանում է, իսկ մազերը մնում են վէրքի տակ, որից սկսում է կուռը ուռչել։ Որովհետեւ հիւանդութիւնը սուր կերպարանք է. ստանում, ուստի ծնողները վերջապէս հրաւիրում են բժշկին, որը յայտնում է որ արդէն ուշ է և ոչինչ վերականգնել չը կայ. և յիշուի հիւանդը մեռնում է, թողնելով սգի մէջ ծնողներին։ Արդեօք պիտի խրատվեն մեր նախապաշարված ծնողները»։

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՆԻՑ մեզ գրում են. «Մեր հասարակութիւնը դեռ ևս գտնվում է այն ստակալի սպանութեան տպաւորութեան տակ, որ կատարվեցաւ սրանից մի քանի օր առաջ այստեղի վաճառում Գիշերը անյայտ չարագործները սպանում են վաճառօրը՝ Աշամ վարդապետ Տէր-Նիկողոսեանին։ Սպանութիւնը կատարված է ամենաանխիղճ կերպով. չարագործները ուղղակի մօրթիկ են ծերունի վարդապետին քնած ժամանակ մահաճակով վրա և կողոպտել են սենեակը։ Լուր կայ, որ վարդապետը աւելի քան 1,000 թուրքի փող է ունեցել սենեակում, և չարագործները այդ փողը զողանալու նպատակով էլ սպանել են վարդապետին։ Խիստ միջոցներ են ձեռք առնված չարագործներին գտնելու համար։ Ազամ վարդապետ Տէր-Նիկողոսեան աւելի քան 70 տարեկան էր, և ունի (նա աշխարհական եղած ժամանակ ամուսնացած էր) մի բժիշկ որդի։ Լուր ենք որ օստիկանութիւնը գտել է չարագործների մի քանի հետքերը»։

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են, որ նորերումս վախճանված հարուստ վաճառական Պողոս Սարգսեանի ամուսինը նուրիւն է բարեգործական նըպատակներով 7,000 թուրքի։

Բագուի մէջ, ինչպէս մեզ գրում են այնտեղից, սպասում են այս օրերս թեմական առաջնորդին։ Հասարակութիւնը յոյս ունի, որ առաջնորդը վերջապէս վերջ կը տալ այն բոլոր դժգոհութիւններին և խառնալիքութիւններին, որոնք առաջ են եկել թէ քահանայացուների և թէ առհասարակ տեղական հոգեւորականների վերաբերութեամբ։

